ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՅ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Օ անցած փառքի վերջին բեկորներ!
Նորից արթնացնում էք դուք իմ հոգում
Անդարձ օրերի անգին պատկերներ
Եւ խորին ցաւով իմ սիրտը լցնում։

Ամեն մի բուռն հող և ամեն մի քար
Վրկայ է այստեղ դարաւոր փառքին.
Այստեղ բոլորը սուրբ է ինձ համար,
Ինչ որ ընկած է աչքիս առաջին։

Եւ այս տաճարներն, բարեպաշտութեան
Եւ ճոխ արւեստի անխօս վրկաներ,
Եւ այս արքունիքն թագաւորական,
Եւ այս կիսաւեր խարխուլ պարիսպներ։

Այն հռուն կեանքի ուրախ աղմուկից
Այսօր մեզ համար էլ ոչինչ չը մնաց.
Բլուրների տակ ծածկուած աչքերից՝
Ամեն բան թաղուած, ամեն բան լռած։

Էջմիածին, 1893 թ., մայիսի 10։